ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

16 Հունիսի 2011 թվականի N 24

«ՎԱՇԻՆԳՏՈՆ ՔԵՓԻԹԼ ԷՍՔՐՈՈՒ ԸՆԴ ԹՐԱՍԹ» ՓԲԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի պահանջով,հիմք ընդունելով «Վաշինգտոն Քեփիթլ էսքրոու ընդ Թրասթ» ՓԲԸ-ի խնդրանքը.

Հաշվի առնելով,որ «Վաշինգտոն Քեփիթլ էսքրոու ընդ Թրասթ» ՓԲԸ-ին Ձորաղբյուր գյուղում սեփականության իրավունքով պատկանող 9.5 հա գյուղ.նշանակության հողամասը բաժանված է 14 գույքային միավորի և նրանց կողմից պետք է կառուցապատվի 2.2074 հա տարածք, ընկերությունը պարտավորվում է վճարել կառուցապատվող տարածքների կադաստրային արժեքների տարբերությունը,իսկ մնացած տարածքում կատարել ծառատունկ,որի հետևանքով կզարգանան ներհամայնքային ենթակառուցվածքները,սպասարկման ծառայությունները,կբացվեն նոր աշխատատեղեր և զգալիորեն կավելանա համայնքի բյուջեի եկամուտները.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը,խնդրանքով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը,որպեսզի թույլատրվի Ձորաղբյուր համայնքի վարչական տարածքում գտնվող «Վաշինգտոն Քեփիթլ էսքրոու ընդ Թրասթ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 9.5 հա գյուղ նշանակության հողերից 2.2074 հա նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոխել բնակավայրի նպատակային նշանակության:

Կողմ	դեմ	ձեռնպահ	
			Հայրապետյան Էլլա
			Հայրապետյան Մուշեղ
			Հարությունյան Խաչատուր
			Նուրիջանյան Սիմակ
			Սահակյան Ար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ